

Հրատարակվում է

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ  
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ

SPONSORED BY  
THE COUNCIL OF EUROPE

**ASSOCIATION OF JUDGES OF THE REPUBLIC OF ARMENIA**

**EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS**

**COLLECTION OF JUDGMENTS**

*Edited by Alvina Gyulumyan*

Member of the Constitutional Court of the Republic of Armenia,

President of the Association of Judges of the RA

YEREVAN 2002

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՎՃԻՌՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀՀ սահմանադրական դատարանի անդամ,  
ՀՀ Դատավորների միության նախագահ  
Ալվինա Գյուլումյանի ընդհանուր խմբագրությամբ

**ԵՐԵՎԱՆ 2002**

**Տպագրվում է ՀՀ Ղատավորների միության  
խորհրդի որոշմամբ**

**Խմբագիր**

**ՀՀ սահմանադրական դատարանի  
աշխատակազմի գլխավոր մասնագետ  
Լիանա Հակոբյան**

Վճիռներն անգլերենից թարգմանել են.

Լուսինե Պողոսյանը  
Մարինա Մխիթարյանը  
Կարինե Բալայանը  
Սոնա Հովհաննիսյանը  
Վահե Ենգիբարյանը  
Աննա Ղազարյանը

ՀԱԼՖՈՐԴՆ ԸՆԴՂԵՄ ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ  
CASE OF HALFORD v. THE UNITED KINGDOM

Դատարանի  
1997թ. մայիսի 27-ի վճիռը

Հալֆորդն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, համաձայն Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի («Կոնվենցիա») 43-րդ հոդվածի և Դատարանի A կանոնակարգի համապատասխան դրույթների, նիստ գումարելով որպես Պալատ՝ դատավորների հետևյալ կազմով. պրն Ռ. Բերնհարդտ, Նախագահ, պրն Լ.-Է. Պետիտի, պրն Ք. Ռուսո, պրն Ա. Շպիլման, պրն Ի. Ֆոյգել, պրն Ջ. Մ. Մորենիլա, սըր Ջոն Ֆրիլենդը, պրն Մ.Ա. Լոպես-Ռոչա, պրն Պ. Կուրիս

նաև պրն Յ. Պետցոլը, Քարտուղար և պրն Պ. Ջ. Սահոնի, Քարտուղարի տեղակալ: 1997թ. մայիսի 19-ի և մայիսի 27-ի դռնփակ խորհրդակցություններից հետո 1997թ. մայիսի 27-ին ընդունել է հետևյալ վճիռը: **ՎԱՐՈՒՅԹԸ**

1. Գործը Դատարան է հանձնվել 1996թ. մայիսի 28-ին՝ Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի («Հանձնաժողով») և 1996թ. օգոստոսի 27-ին՝ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարության («Կառավարություն») կողմից՝ Կոնվենցիայի 32-րդ հոդվածի 1-ին կետով և 47-րդ հոդվածով սահմանված եռամսյա ժամկետում: Գործը հարուցվել է 1992թ. ապրիլի 22-ին տկն Ալիսոն Հալֆորդի կողմից՝ ընդդեմ Միացյալ Թագավորության Հանձնաժողով ներկայացված զանգատի հիման վրա (թիվ 20605/92): Հանձնաժողովի խնդրանքը հիմնվում էր 44-րդ և 48-րդ հոդվածների և այն հայտարարության վրա, որով Միացյալ Թագավորությունը ճանաչել է Դատարանի իրավագործությունը (46-րդ հոդված): Խնդրանքի նպատակն էր Դատարանի կողմից որոշման կայացումն առ այն, թե արդյոք գործի հանգամանքները վկայում են պատասխանող պետության կողմից Կոնվենցիայի 8, 10, 13 և 14-րդ հոդվածներով ստանձնած պարտավորությունների խախտման մասին: 2. Ի պատասխան Դատարանի A կանոնակարգի 33-րդ (d) կետի կանոնի համաձայն կատարված հարցմանը, դիմողը նշել է, որ ցանկանում է մասնակցել դատավարությանը և նշանակել է իր շահերը ներկայացնող փաստաբանի (30-րդ կանոն): 3. Որպես ex officio անդամ, Պալատում ընդգրկվել է սըր Ջոն Ֆրիլենդը՝ Միացյալ Թագավորությունից ընտրված դատավոր (Կոնվենցիայի 43-րդ հոդված), ինչպես նաև պրն Ռ. Բերնհարդտը՝ Դատարանի փոխնախագահ (21-րդ կանոնի 4-րդ (d) կետ): 1996թ. հունիսի 10-ին Դատարանի նախագահ պրն Ռ. Ռիսդալը՝ Քարտուղարի ներկայությամբ, վիճակահանությամբ ընտրել է մյուս յոթ դատավորներին՝ պրն Լ.-Է. Պետիտի, պրն Ք. Ռուսո, պրն Ա. Շպիլման, պրն Ի. Ֆոյգել, պրն Ջ.Մ. Մորենիլա, պրն Մ.Ա. Լոպես-Ռոչա և պրն Պ. Կուրիս (Կոնվենցիայի 43-րդ հոդված և 21-րդ կանոնի 4-րդ կետ): 4. Որպես Պալատի նախագահ (21-րդ կանոնի 6-րդ կետ) պրն Բերնհարդտը, Քարտուղարի միջոցով խորհրդակցել է Կառավարության ներկայացուցչի, դիմողի փաստաբանի և Հանձնաժողովի պատվիրակի հետ՝ գործի քննության կազմակերպման կապակցությամբ (37-րդ կանոնի 1-ին կետ և 38-րդ կանոն): Այնուհետև, համաձայն Նախագահի կարգադրության, Քարտուղարությունը ստացել է Կառավարության և դիմողի գրավոր բացատրությունները՝ համապատասխանաբար 1997թ. հունվարի 2-ին և 1997թ. հունվարի 6-ին: 5. 1996թ. օգոստոսի 20-ին պրն Բերնհարդտը թույլատրել է Լոնդոնում գործող՝ Մարդու իրավունքների «Ազատություն» հասարակական կազմակերպությանը ներկայացնել գործի որոշակի հարցերի վերաբերող գրավոր բացատրություն, որն ստացվել է 1997թ. հունվարի 2-ին: 6. 1997թ. փետրվարի 21-ին, Պալատը որոշել է մերժել գործը Դատարանին փոխանցելու վերաբերյալ Կառավարության դիմումը՝ այն հիմքով, որ

այդ դիմումն ստացվել էր Կոնվենցիայի 32-րդ հոդվածի 1-ին կետով և 47-րդ հոդվածով սահմանված եռամսյա ժամկետը լրանալուց հետո, եւ չկար այդ ժամկետը երկարացնելու բացառիկ պատճառ:7. Նախագահի որոշման համաձայն՝ լսումները տեղի են ունեցել դռնբաց նիստում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պալատում, Ստրասբուրգում, 1997թ. մարտի 17-ին:

Դատարանում կողմերին ներկայացրել ենա. Կառավարության կողմից՝ պրն Մ. Իթոն՝ իրավախորհրդատուի տեղակալ, Արտաքին գործերի և Ազգությունների համագործակցության նախարարություն, ներկայացուցիչ

պրն Զ. Իդի, դատապաշտպան, փաստաբան  
պրն Յ. Բարթեր, Ներքին գործերի նախարարություն, պրն Պ. Ռեզան, Ներքին գործերի նախարարություն, պրն Բ. Ռայկես, Առևտրի և արդյունաբերության նախարարություն, խորհրդակցաններ

բ. Հանձնաժողովի կողմից՝ տկն Զ. Լիդի, պատվիրակ

գ. Դիմողի անունից պրն Ռ. Մեյկին սուլիսիտոր

պրն Փ. Դաֆֆի պաշտպան, փաստաբան: Դատարանը լսել է տկն Լիդիի, պրն Մեյկինի, պրն Դաֆֆիի և պրն Իդիի ելույթները, ինչպես նաև Պալատի դատավորներից մեկի առաջադրած հարցի պատասխանը: **ՓԱՍՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼԻ. Գործի հանգամանքները**

8. Դիմողը՝ տկն Ալիսոն Հալֆորդը, ծնվել է 1940թ. և ապրում է Վիրալում: 1962թ. մինչև պաշտոնաթող լինելը՝ 1992թ., նա աշխատել է ոստիկանական ծառայությունում: Ա. Վիճարկվող հեռախոսային գաղտնալսումների հանգամանքները9. 1983թ. մայիսին տկն Հալֆորդը նշանակվել է Մերսիսայդի ոստիկանապետի օգնականի պաշտոնում: Որպես կին՝ նա զբաղեցնում էր ոստիկանական ամենաբարձր պաշտոնը Միացյալ Թագավորությունում: 10. Հետագա յոթ տարիների ընթացքում տկն Հալֆորդն ութ անհաջող փորձ է կատարել ոստիկանապետի տեղակալի պաշտոնում նշանակվելու համար՝ երկրի ոստիկանական համակարգում առաջացած թափուր տեղերում, այդ թվում և Մերսիսայդում: Պաշտոնում նման առաջխաղացման համար պահանջվում է Ներքին գործերի նախարարության հաստատումը: Այնուամենայնիվ, դիմողը նշել է, որ այդ հաստատումը հետևողականորեն մերժվել է՝ հիմնվելով Մերսիսայդի ոստիկանապետի երաշխավորագրի վրա. վերջինս դեմ էր սեռային հավասարությանը: 11. 1990թ. փետրվարին հերթական անգամ մերժվելով՝ 1990թ. հունիսի 4-ին տկն Հալֆորդը հայց է հարուցել Աշխատանքային հարցերով դատարան, inter alia, Մերսիսայդի ոստիկանապետի և Ներքին գործերի նախարարի դեմ իր հանդեպ դրսևորած սեռային խտրականության կապակցությամբ: 1990թ. հունիսի 14-ին Մերսիսայդի ոստիկանական վարչության պետը և նրա տեղակալը նշանակվել են «Հատուկ կոմիտե»՝ խտրականության հետ կապված հարցերը կարգավորելու համար: 12. Տկն Հալֆորդը պնդում է, որ Մերսիսայդի ոստիկանական վարչության որոշ անդամներ «արշավ» են ծավալել իր դեմ՝ Աշխատանքային հարցերով դատարան ներկայացրած իր գանգատին ի պատասխան: Այս արշավն իրականացվել է տեղեկատվության արտահոսքի, դիմողի հեռախոսագրույցների գաղտնալսման (տես ստորև՝ կետ 16) և նրա դեմ կարգապահական վարույթ հարուցելու միջոցով: 13. Այսպիսով, 1990թ. սեպտեմբերի 14-ին Հատուկ կոմիտեն Ավագ պաշտոնյաների աշխատանքային կարգապահության կոմիտեին ուղարկել է ոստիկանապետի զեկույցը՝ 1990թ. հունիսի 24-ին տկն Հալֆորդի կողմից կատարված ենթադրյալ զանցանքի միջադեպի վերաբերյալ: Աշխատանքային կարգապահության կոմիտեն 1990թ. սեպտեմբերի 20-ին որոշել է անցկացնել պաշտոնական քննություն և գործը հանձնել Ոստիկանական բողոքների հարցերով վարչություն և 1991թ. փետրվարի

8-ին՝ մամուլի դատին: 1990թ. դեկտեմբերի 12-ին տկն Հալֆորդը հեռացվել է պաշտոնից: 14. Դիմողն այս որոշումները բողոքարկել է Բարձր դատարան: Գործի քննությունը

հետաձգվել է դատավոր պրն Մաքֆերսոնի կողմից 1991թ. սեպտեմբերին՝ կողմերի միջև համաձայնության հասնելու հեռանկարով: Այնուամենայնիվ, կողմերը չեն եկել փոխհամաձայնության, և գործը կրկին հանձնվել է նրան՝ 1991թ. դեկտեմբերի 20-ին: Նա գտել է, որ Ոստիկանական վարչության պետը և նրա տեղակալը գերազանցել են իրենց իրավունքները, և առկա է եղել անարդարության տարր: Ուստի նա չեղյալ է հայտարարել համապատասխան որոշումները: 15. Գործի քննությունը Աշխատանքային հարցերով դատարանում տեղի է ունեցել 1992թ. հունիսին: 1992թ. հուլիսի 14-ին վարույթը հետաձգվել է կողմերի միջև համաձայնության հասնելու հեռանկարով, որը հանգեցրել է հարցի կարգավորմանը: Ոստիկանապետը տկն Հալֆորդին վճարել է 10.000 ֆունտ ստեռլինգ ex gratia (Աշխատանքային հարցերով դատարանի սահմանած առավելագույնը), իսկ Ներքին գործերի նախարարը՝ 5.000 GBP՝ նրա անձնական ծախսերի դիմաց: Համաձայնություն է ձեռք բերվել, որ նա պետք է պաշտոնաթող լինի՝ բժշկական հիմքով (պատճառը 1989թ. ստացած ծնկի վնասվածքն էր): Ներքին գործերի նախարարությունը համաձայնել է նաև ընդունել Հավասար հնարավորությունների հարցերով հանձնաժողովի առաջարկները, *inter alia*, ոստիկանության համակարգում ավագ պաշտոնյաների ընտրության ընթացակարգը նորացնելու և վերանայելու վերաբերյալ: Բ. Վիճարկվող գաղտնալսումները 16. Որպես ոստիկանապետի օգնական՝ տկն Հալֆորդն ապահովված էր աշխատասենյակով և երկու հեռախոսով, որոնցից մեկը՝ անձնական օգտագործման համար: Այս հեռախոսները միացված էին Մերսիսայդի ոստիկանության ներքին հեռախոսացանցին, որը հասարակական հեռախոսացանցից առանձին գործող հեռակապի համակարգ էր: Հեռախոսներից օգտվելու ոչ մի սահմանափակում չկար, և նրան չէր տրվել ոչ մի ուղղություն, բացի Աշխատանքային հարցերով դատարան դիմելուց կարճ ժամանակ անց իր պահանջով ոստիկանապետից ստացած հավաստագումից առ այն, որ ինքն աշխատանքի ընթացքում իրավունք ունի մասնակցելու վարույթին, ներառյալ՝ հեռախոսով: Քանի որ նրան հաճախակի ոստիկանությունից սահագանգում էին, նրա բնակարանի հեռախոսավարձի մեծ մասը վճարում էր Մերսիսայդի ոստիկանությունը: Նրա բնակարանի հեռախոսը «հեռախոսացանցի ընդհատման կետի» միջոցով միացած էր հասարակական հեռախոսացանցին: 17. Նա պնդել է, որ իր անձնական և ծառայողական հեռախոսագրույցները գաղտնալսվում են՝ սեռային խտրականության հարցով գործի վարույթում օգտագործելու համար տեղեկություններ ձեռք բերելու նպատակով: Այս պնդումը հիմնավորելու համար նա բազմաթիվ ապացույցներ է ներկայացրել Հանձնաժողովին (տե՛ս Հանձնաժողովի զեկույցի 21-րդ կետը): Բացի դրանից, նա հայտնել է Դատարանին, որ 1991թ. ապրիլի 16-ին մի անանուն աղբյուրից տեղեկացել է Մերսիսայդի ոստիկանության կողմից իր անձնական հեռախոսագրույցների ժապավեններն ստուգելու մասին: Գործի քննության նպատակներով Կառավարությունն ընդունել է, որ դիմողը բավականաչափ ապացույցներ է բերել հաստատելու իր ծառայողական հեռախոսագրույցների գաղտնալսման ողջամիտ հավանականությունը: Այնուամենայնիվ, Կառավարությունը չի ընդունել, որ բավականաչափ ապացույցներ են ներկայացվել՝ հավաստելու անձնական հեռախոսագրույցների գաղտնալսման նման ողջամիտ հավանականությունը հաստատելու համար: 18. Տկն Հալֆորդը հեռախոսագրույցների գաղտնալսման հարցը բարձրացրել է Աշխատանքային հարցերով դատարանում 1992թ. հունիսի 17-ին: 1992թ. հուլիսի 2-ի նիստում Ներքին գործերի նախարարին ներկայացնող փաստաբանը նշել է, որ դիմողն իրավունք չունի վիճարկվող գաղտնալսումների մասին ապացույցներ ներկայացնել Աշխատանքային հարցերով դատարանում, քանի որ Հաղորդակցության գաղտնալսումների մասին 1985թ. օրենքի («1985թ. օրենք») 5-րդ բաժինը հստակորեն բացառում է ցանկացած դատարանում ապացույցների ներկայացումը, որոնք միտված են հիմնավորելու, որ տեղի է ունեցել Օրենքի 1-ին բաժնով նախատեսված հանցագործություն: 19. 1991թ. դեկտեմբերի 6-ին տկն Հալֆորդը դիմել է Հեռակապի գաղտնալսումների հարցերով տրիբունալ

(«Տրիբունալ»)՝ 1985թ. օրենքի 7-րդ բաժնի (տե՛ս ստորև՝ կետեր 30-32) հիման վրա քննությունն իրականացնելու համար: 1992թ. փետրվարի 21-ի նամակում Տրիբունալը տեղեկացրել է տկն Հալֆորդին, որ քննության արդյունքում պարզվել է, որ նրա գործով 1985թ. օրենքի 2-5-րդ բաժիններով սահմանված դրույթների խախտում տեղի չի ունեցել (տե՛ս ստորև՝ կետեր 26-29): 1992թ. մարտի 27-ի նամակում, Տրիբունալը տեղեկացրել է, որ չի կարողացել հաստատել, թե արդյո՞ք փաստացի որևէ գաղտնալսում տեղի է ունեցել (տե՛ս ստորև՝ կետ 32):20. 1992թ. օգոստոսի 4-ի նամակում Ներքին գործերի նախարարը պառլամենտի անդամ պրն Պեյվիդ Ալթոնին տեղեկացրել է, որ ծառայողական հեռախոսակապի վերաբերյալ տկն Հալֆորդի բողոքը «ո՛չ իր պարտականությունների և ո՛չ էլ 1985թ. օրենքով նախատեսված պահանջների շրջանակում է»:II. Գործին առնչվող ներպետական օրենսդրությունը և պրակտիկան. Հասարակական հեռակապի համակարգը1. Հեռակապի գաղտնալսումների մասին 1985թ. օրենքից բխող հանցագործությունը 21. Հեռակապի գաղտնալսման մասին 1985թ. օրենքն ուժի մեջ է մտել 1986թ. ապրիլի 10-ին՝ Սալոնն ընդդեմ Սիացյալ Թագավորության գործով Դատարանի վճռից հետո (1984թ. 2-ը օգոստոսի: Շարքեր Ա, թիվ 82): Դրա նպատակը, ինչպես նշված է Ներքին գործերի նախարարի զեկույցում, հստակ օրենսդրական դաշտի ստեղծումն էր, որի շրջանակներում հասարակական համակարգում հեռակապի գաղտնալսումները կթույլատրվեն և կվերահսկվեն հասարակական վստահություն վայելող եղանակով (Հեռակապի գաղտնալսումները Սիացյալ Թագավորությունում (1985թ. փետրվար), Նորին մեծության գրասենյակ, հրաման 9438):22. «Հասարակական» հեռակապի համակարգը 1984թ. Հեռահաղորդակցության մասին օրենքի հիման վրա («1984թ. օրենք»), տրամադրվող արտոնագրով գործող և Պետքարտուղարի կողմից հաստատված (1985թ. օրենքի 10-րդ բաժնի 1-ին կետ՝ 1984թ. Օրենքի 4-րդ բաժնի 1-ին կետին հղումով) համակարգ է: 23. Համաձայն 1985թ. օրենքի 1-ին բաժնի 1-ին կետի, յուրաքանչյուր ոք, ով միտումնավոր գաղտնալսում է հասարակական հեռակապի համակարգի հեռախոսագրույց, մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ:24. 1-ին բաժնի 2-րդ և 3-րդ կետերը նախատեսում են չորս հանգամանք, որոնց դեպքում հեռախոսագրույցները գաղտնալսող անձը չի մեղադրվում հանցագործության կատարման մեջ: Դրանցից մեկը, որն առնչվում է սույն գործին, Օրենքի 2-րդ բաժնի հիման վրա Պետքարտուղարի թույլտվությամբ կատարվող գաղտնալսումն է (տե՛ս ստորև՝ կետ 26): 2. Ապացույցների բացառում25. 1985թ. օրենքի 9-րդ բաժնի համաձայն՝ ցանկացած վարույթում Դատարանում կամ Տրիբունալում կողմերից ոչ մեկն իրավունք չունի ներկայացնել ապացույցներ, որոնք միտված են պնդելու, որ կամ պետական ծառայողի կողմից կատարվել է 1985թ. օրենքի 1-ին բաժնով նախատեսված հանցանք, կամ նման անձը տվել է 1985թ. օրենքի 2-րդ բաժնով նախատեսված թույլտվություն:3. Թույլտվություններ26. 1985թ. օրենքի 2-րդ և 6-րդ բաժինները սահմանում են հեռակապի գաղտնալսումները և գաղտնալսված նյութը հրապարակելու՝ Պետքարտուղարի կողմից թույլտվություն տալու կարգավորող մանրամասն կանոնները: Այսպիսով, 1985թ. օրենքի 2-րդ բաժնի 2-րդ կետը նախատեսում է.«Պետքարտուղարը թույլտվություն չի տալիս, բացառությամբ այն դեպքերի, երբ գտնում է, որ այն անհրաժեշտ է.ա. ի շահ պետական անվտանգության,բ. լուրջ հանցագործություն կանխելու կամ բացահայտելու նպատակով, գ. Սիացյալ Թագավորության տնտեսական բարեկեցությունը պաշտպանելու նպատակով»:Թույլտվության անհրաժեշտության հարցը քննելիս՝ Պետքարտուղարը պետք է հաշվի առնի անհրաժեշտ տեղեկությունը ձեռք բերելու այլ ողջամիտ միջոցների օգտագործման հնարավորությունը (1985թ. օրենքի 2-րդ բաժնի 2-րդ կետ):27. Թույլտվության մեջ նշվում է այն անձի անունը, ով լիազորված է գաղտնալսում կատարելու, ինչպես նաև նշվում են հեռակապի մասին մանրամասն տվյալներ, ինչպիսիք են՝ հեռագանգերի տեղի և դրանցում ներգրավված անձանց անունները (1985թ. օրենքի 2-րդ բաժնի 1-ին կետ և 3-րդ բաժին):28. Թույլտվությունը

տրվում է անձամբ պետքարտուղարի կամ անհետաձգելի դեպքում, ավագ պաշտոնյայի կողմից, որը Պետքարտուղարի կողմից լիազորված է նման թույլտվություն տալու համար: Պետքարտուղարի տված թույլտվությունն ուժի մեջ է երկու ամիս, իսկ պաշտոնյայինը՝ երկու աշխատանքային օր: Սահմանված հանգամանքներում թույլտվությունը կարող է փոփոխվել կամ նորացվել (1985թ. օրենքի 4-րդ և 5-րդ բաժիններ):29. Օրենքի 6-րդ բաժինը նախատեսում է, *inter alia*, թե թույլտվության հիման վրա ձեռք բերված նյութերի որ մասը կարող է պատճենահանվել, հրապարակվել կամ պահվել:4. Հեռակապի գաղտնալսումների հարցերով տրիբունալ30. 1985թ. օրենքը նաև նախատեսում է Հեռակապի գաղտնալսումների հարցերով տրիբունալի հիմնադրում: Տրիբունալի հինգ անդամներից յուրաքանչյուրը պետք է ունենա առնվազն 10 տարվա իրավաբանական աշխատանքի փորձ, և Տրիբունալում պաշտոնը զբաղեցնում է հինգ տարի՝ վերընտրվելու հնարավորությամբ (1985թ. օրենքի 7-րդ բաժին և 1-ին աղյուսակ):31. Յուրաքանչյուր ոք, ով համոզված է, *inter alia*, որ իր երկկողմ հեռախոսագրույցները գաղտնալսվում են հասարակական հեռախոսակապի համակարգի միջոցով, կարող է դիմել Տրիբունալ՝ քննություն կազմակերպելու պահանջով: Եթե պահանջն անլուրջ և անհեթեթ է, ապա Տրիբունալը պարզում է նախ թույլտվության առկայությունը, ապա՝ թույլտվություն տալու՝ 1985թ. օրենքով նախատեսված պայմանների կատարումը: Այս հարցի կապակցությամբ որոշում կայացնելիս՝ Տրիբունալը կիրառում է «դատարանների կողմից դատական վերահսկողության վերաբերյալ դիմումների քննության նկատմամբ կիրառելի սկզբունքները» (1985թ. օրենքի 7-րդ բաժնի 2-րդ և 4-րդ կետեր):32. Եթե Տրիբունալը որոշում է, որ 1985թ. օրենքի խախտում տեղի չի ունեցել, նա տեղեկացնում է բողոքարկողին, բայց չի հաստատում, թե արդյոք խախտում տեղի չի ունեցել թույլատրված գաղտնալսման բացակայության պատճառով կամ, եթե նման գաղտնալսում տեղի է ունեցել, այն հիմնավորված է եղել, արդյոք, 1985թ. օրենքի պայմաններով: Եթե Տրիբունալը որոշում է, որ տեղի է ունեցել խախտում, ապա նա պարտավոր է այդ մասին զեկուցել Վարչապետին, և կարող է տեղեկացնել բողոքարկողին: Այն նաև իրավասու է, *inter alia*, կարգադրելու թույլտվության չեղյալ հայտարարումը և պահանջելու դրամական փոխհատուցում բողոքարկողի համար: Տրիբունալը չի պատճառաբանում իր որոշումները, և նրա որոշումները չեն կարող բողոքարկվել (1985թ. օրենքի 7-րդ բաժնի 7-րդ և 8-րդ կետեր):5. Հանձնակատարը33. 1985թ. օրենքը նաև նախատեսում է Վարչապետի կողմից հանձնակատարի նշանակում: Առաջին հանձնակատարը դատավոր լորդ Լլոյդն էր, ում 1992թ. փոխարինել է լորդ Բինգեմը՝ նույնպես դատական համակարգի ավագ դատավոր, ում, իր հերթին, փոխարինել է լորդ Նոլանը՝ 1994թ.:34. Հանձնակատարի գործառույթները ներառում են 1985թ. օրենքով նախատեսված՝ Պետքարտուղարի գործառույթների վերահսկումը, 1985թ. օրենքի 2-րդ և 5-րդ բաժինների խախտումների մասին Վարչապետին զեկուցելը, որոնց մասին չի զեկուցել Տրիբունալը, և իր գործառույթների իրականացման մասին այս զեկույցը պետք է ներկայացվի պառլամենտ, չնայած նրան, որ Վարչապետն իրավասու է դրանից հանելու ցանկացած հարց, որի հրապարակումը կվտանգի ազգային անվտանգությունը, լուրջ հանցագործության կանխարգելումը կամ Միացյալ Թագավորության բարեկեցությունը: Որևէ հարց դուրս թողնելը պետք է նշվի զեկույցում (1985թ. օրենքի 8-րդ բաժին):35. Ընդհանուր առմամբ, համաձայն հանձնակատարի՝ Վարչապետին ուղղված զեկույցների, նոր թույլտվությունների թիվն աճում է, սակայն հանձնակատարը բավարարված է, որ բոլոր նոր թույլտվությունները համապատասխանում են 1985թ. օրենքի 2-րդ բաժնով նախատեսված պահանջներին:Բ. Հասարակական ցանցից անջատ գործող հեռակապի համակարգը36. 1985թ. օրենքը չի տարածվում հասարակական ցանցից անջատ գործող հեռակապի համակարգի վրա, ինչպիսին է Մերսիսայդի ոստիկանատան ներքին համակարգը, և գոյություն չունի նման համակարգում հեռախոսային

գաղտնալսումները կարգավորող այլ օրենսդրություն:37. Անգլիական ընդհանուր իրավունքը չի սահմանում գաղտնալսումների դեմ իրավական պաշտպանության միջոց, քանի որ այն՝ «որպես այդպիսին, անձեռնմխելիության դեմ ոտնձգության հարկադիր պայման է» (դատավոր պրն Սեդլին Ռ.-ն ընդդեմ Յեռարձակման հարցերով գանգատների հանձնաժողովի, ex parte Բերկլի, գործով 1996թ. հոկտեմբերի 4-ի վճիռը):ՎԱՐՈՒՅԹԸ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄՅՑ. Հանձնաժողովին ուղղված՝ 1992թ. ապրիլի 22-ի իր գանգատում (թիվ 20605/92) տկն Հալֆորդը նշել է, որ իր ծառայողական և բնակարանի հեռախոսների գաղտնալսումները հանդիսանում են միջամտություն Կոնվենցիայի 8-րդ և 10-րդ հոդվածներով նախատեսված իր անձնական կյանքը հարգելու և սեփական կարծիք ունենալու իրավունքներին, որ ինքը չի կարող օգտվել Կոնվենցիայի 13-րդ հոդվածով նախատեսված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցից, և որ ինքը սեռային խտրականության զոհ է դարձել՝ ի խախտումն Կոնվենցիայի 14-րդ հոդվածի՝ կապված 8-րդ և 10-րդ հոդվածների հետ:39. 1995թ. մարտի 2-ին Հանձնաժողովն ընդունել է գանգատը: 1996թ. ապրիլի 18-ի զեկույցում (31-րդ հոդված) Հանձնաժողովն արտահայտել է հետևյալ տեսակետը՝ որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ և 13-րդ հոդվածների խախտում՝ կապված տկն Հալֆորդի ծառայողական հեռախոսի հետ (քսանվեց ծայնով՝ ընդդեմ մեկի), և որ Կոնվենցիայի 8, 10 և 13-րդ հոդվածների խախտում տեղի չի ունեցել՝ կապված նրա բնակարանի հեռախոսի հետ (միաձայն), և որ անհրաժեշտություն չկա գործը քննել 10-րդ հոդվածի առնչությամբ՝ կապված ծառայողական հեռախոսի հետ, և որ տեղի չի ունեցել 14-րդ հոդվածի խախտում՝ կապված 8-րդ և 10-րդ հոդվածների հետ:ԿՈՂՍԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ40. Ե՛վ դատաքննության ժամանակ, ե՛լ գրավոր բացատրություններում Կառավարությունը խնդրել է Դատարանին վճռել, որ Կոնվենցիայի խախտում տեղի չի ունեցել:Դիմողը պնդել է, որ տեղի է ունեցել խախտում, և Դատարանին խնդրել է տրամադրել Կոնվենցիայի 50-րդ հոդվածով նախատեսված փոխհատուցում:ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐԻ. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 8-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ ՎԻՃԱՐԿՎՈՂ ԽԱԽՏՈՒՄ41. Տկն Հալֆորդը պնդել է, որ հեռախոսագրույցների գաղտնալսումը Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում է, որում ասվում է.«1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության հանդեպ հարգանքի իրավունք:2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի, կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:Հանձնաժողովը համաձայն է, որ տեղի է ունեցել խախտում այնքանով որքանով վերաբերվել է ծառայողական հեռախոսագրույցների գաղտնալսմանը՝ Կառավարությունն առարկել է այս պնդման դեմ:Ա. Ծառայողական հեռախոսները1. 8-րդ հոդվածի կիրառելիությունը՝ ծառայողական հեռախոսների կապակցությամբ գանգատի նկատմամբ42. Հանձնաժողովը համաձայն է դիմողի այն պնդմանը, որ 8-րդ հոդվածի «անձնական կյանք» և «նամակագրական կապ» հասկացությունները կիրառելի են դիմողի՝ Մերսիսայդի ոստիկանատանը ծառայողական հեռախոսագրույցների նկատմամբ, քանի որ Դատարանն իր նախադեպային իրավունքում այդ հասկացություններին տվել է ընդարձակ մեկնաբանություն (տե՛ս, օրինակ, Կլասսը և այլոք ընդդեմ Գերմանիայի 1978թ. սեպտեմբերի 6-ի գործով վճիռը: Շարքեր Ա, թիվ 28, էջ 21, կետ 41, Հուլիոն ընդդեմ Ֆրանսիայի գործով 1990թ. ապրիլի 24-ի վճիռը: Շարքեր Ա, թիվ176-Բ, էջ 41, կետ 8 և էջ 52, կետ 25, Նիմիցն ընդդեմ Ֆրանսիայի գործով 1992թ. դեկտեմբերի 16-ի վճիռը: Շարքեր Ա, թիվ 251, և Ա-ն ընդդեմ Ֆրանսիայի գործով 1993թ. նոյեմբերի 23-ի վճիռը: Շարքեր Ա, թիվ 277-Բ):43. Կառավարությունը նշել է, որ տկն Հալֆորդի՝

աշխատավայրից կատարած հեռախոսագանգերը չեն կարող պաշտպանվել 8-րդ հոդվածով, քանի որ դրանք չեն կարող ողջամտորեն համարվել մասնավոր: Ինչպես դատավարության ժամանակ նշել է Կառավարության անունից հանդես եկող փաստաբանը, գործատունը սկզբունքորեն իրավունք ունի առանց իր աշխատակցի նախնական իմացության հսկել վերջինիս հեռախոսագրույցների, գործատուի տրամադրած հեռախոսներով:44. Դատարանի կարծիքով, համաձայն նախադեպային իրավունքի 8-րդ հոդվածի «անձնական կյանք» և «նամակագրական կապ» հասկացությունները հավասարապես տարածվում են ինչպես անձնական հեռագանգերի, այնպես էլ աշխատավայրից կատարված հեռախոսագանգերի վրա (տե՛ս վերը նշված Կլասսը և այլոք ընդդեմ Գերմանիայի գործով վճիռը, նույն մեջբերումը, Մալոնեն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճիռը, loc.cit., Մոլեն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով 1984թ. օգոստոսի 2 վճիռը: Շարքեր Ա, թիվ 82, էջ 30, կետ 64, վերը նշված Հուլիոսի գործով վճիռը, loc. cit., և mutatis mutandis, վերը նշված Նիմիցի գործով վճիռը, էջ 33-35, կետեր 29-33):45. Որևէ ապացույց չկա, որ Մերսիսայդի ոստիկանատան ներքին հեռախոսակապից օգտվող տկն Հալֆորդը զգուշացված էր հեռախոսագրույցների գաղտնալսման մասին: Դատարանի կարծիքով, տկն Հալֆորդի զանգերի անձնական բնույթը պայմանավորված էր հետևյալով: Որպես ոստիկանապետի օգնական՝ միայն ինքն իրավունք ուներ օգտվելու իր գրասենյակի երկու հեռախոսներից, որոնցից մեկը նախատեսված էր նրա անձնական օգտագործման համար: Բացի դրանից, նա իրավունք ուներ օգտվելու ծառայողական հեռախոսից սեռային խտրականության մասին գործի դատավարության ժամանակ (տե՛ս վերը՝ կետ 16):46. Վերոհիշյալ պատճառներով՝ Դատարանը եզրակացնում է, որ տկն Հալֆորդի՝ իր գրասենյակի հեռախոսներով խոսակցությունները «անձնական կյանք» և «նամակագրական կապ» հասկացությունների շրջանակներում են, ուստի 8-րդ հոդվածը կիրառելի է զանգատի այս մասի նկատմամբ:2. Միջամտության առկայությունը47. Կառավարությունն ընդունել է, որ դիմողը ներկայացրել է իր ծառայողական հեռախոսագրույցների գաղտնալսման մասին բավականաչափ ապացույցներ: Հանձնաժողովը ևս ընդունում է, որ դիմումի քննությամբ բացահայտվել է նման գաղտնալսման ողջամիտ հավանականություն:48. Դատարանը համաձայնել է: Ապացույցները հիմնավորում են այն եզրակացությունը, որ առկա է ողջամիտ հավանականություն, որ տկն Հալֆորդի՝ իր գրասենյակից կատարված հեռախոսագրույցները գաղտնալսվել են Մերսիսայդի ոստիկանության կողմից՝ վերջինիս դեմ հարուցված՝ սեռային խտրականության հարցերով գործի վարույթում իր պաշտպանությանն աջակցելու համար նյութեր ձեռք բերելու նպատակով: Այս գաղտնալսումը 8-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով հանդիսանում է «միջամտություն պետական մարմինների կողմից» տկն Հալֆորդի անձնական կյանքի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունքին:3. Արդյո՞ք միջամտությունը «նախատեսված էր օրենսդրությամբ»49. 8-րդ հոդվածի 2-րդ կետը նախատեսում է նաև, որ պետական մարմինների միջամտությունն անձնական կյանքի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունքին թույլատրվում է այն դեպքում, երբ «նախատեսված է օրենքով»:Համաձայն Դատարանի նախադեպային իրավունքի՝ այս ձևակերպումը ոչ միայն պահանջում է համապատասխանությունը ներպետական օրենքին, այլ նաև վերաբերում է օրենքի որակին՝ պահանջելով դրա համապատասխանությունը իրավական պետությանը:Հասարակական հսկողության բացակայության և իշխանությունը չարաշահելու վտանգի պատճառով պետական մարմինների կողմից հեռահաղորդակցության հսկողության և գաղտնալսման գաղտնի միջոցառումների համատեքստում ներպետական օրենսդրությունը պետք է ապահովի անձի պաշտպանությունը՝ 8-րդ հոդվածով սահմանված իրավունքներին կամայական միջամտությունից: Հետևաբար, ներպետական օրենսդրությունը պետք է հստակ լուսաբանի պետական իրավասու մարմինների կողմից նման գաղտնի միջոցառումների կիրառման հանգամանքներն ու պայմանները (տե՛ս վերը նշված

Մալոննի գործով վճիռը, էջ 32, կետ 67, և mutatis mutandis, Լինդերն ընդդեմ Շվեդիայի գործով 1987թ. մարտի 26 վճիռը: Շարքեր Ա, թիվ 116, էջ 23, կետեր 50-51):50. Սույն գործում Կառավարությունն ընդունել է, որ եթե Դատարանը, հակառակ իրենց պնդման, եզրակացնի, որ տեղի է ունեցել միջամտություն դիմողի՝ 8-րդ հոդվածով սահմանված իրավունքներին, ապա նման միջամտությունը «նախատեսված չէ օրենքով», քանի որ ներպետական օրենսդրությունը չի նախատեսում հասարակական հեռախոսացանցից անջատ գործող գաղտնալսումների կարգավորում:51. Դատարանը նշում է, որ 1985թ. օրենքը կիրառելի չէ պետական մարմինների կողմից գործարկվող ներքին հեռախոսակապի համակարգերի նկատմամբ, ինչպիսին է Մերսիսայդի ոստիկանական համակարգը, և որ ներպետական օրենսդրությունը չի նախատեսում նման համակարգերի հեռագանգերի գաղտնալսումները կարգավորող որևէ դրույթ (տե՛ս վերը՝ կետեր 36-37): Հետևաբար, չի կարելի ասել, որ միջամտությունը «նախատեսված է եղել օրենքով»՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետի նպատակների համար, քանի որ ներպետական օրենսդրությունը տկն Հալֆորդի համար չի ապահովում պատշաճ պաշտպանություն՝ ընդդեմ ոստիկանական միջամտության՝ իր անձնական կյանքի և նամակագրական կապի հանդեպ հարգանքի իրավունքին:Այստեղից հետևում է, որ տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում՝ կապված տկն Հալֆորդի ծառայողական հեռախոսի գաղտնալսումների հետ:Բ. Բնակարանի հեռախոսը1. 8-րդ հոդվածի կիրառելիությունը բնակարանի հեռախոսի կապակցությամբ զանգատի նկատմամբ52. Համաձայն Դատարանի նախադեպային իրավունքի (տե՛ս վերը՝ կետ 44)՝ բնակարանից կատարված հեռախոսազրույցները Կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված «անձնական կյանք» և «նամակագրություն» հասկացությունների շրջանակում են: Իհարկե, Կառավարությունը չի վիճարկում դա:Ուստի 8-րդ հոդվածը կիրառելի է տկն Հալֆորդի զանգատի այս մասի նկատմամբ:2. Միջամտության առկայություն53. Դիմողը պնդել է, որ իր բնակարանի հեռախոսով արված հեռախոսազրույցները նույնպես գաղտնալսվել են Մերսիսայդի ոստիկանության կողմից սեռային խտրականության գործով վարույթում պաշտպանվելու նպատակով: Դիմողը նշել է Հանձնաժողովին ներկայացրած՝ գաղտնալսումների մասին ապացույցները, և Դատարանին տրված լրացուցիչ մանրամասները (տե՛ս վերը՝ կետ 17): Նա նաև պնդել է, որ հակառակ Հանձնաժողովի տեսակետի, ինքը պարտավոր չէ հիմնավորել, որ առկա է եղել իր անձնական հեռախոսազրույցների գաղտնալսման «ողջամիտ հավանականություն»: Նման պահանջը կհակասեր վերը նշված՝ Կլասսի և այլոց գործով Դատարանի վճռի այն մասին, որ գաղտնի հսկողության սպառնալիքն ինքնին նշանակում է միջամտություն 8-րդ հոդվածով նախատեսված իրավունքներին: Որպես այլընտրանք, նա պնդում է, որ եթե Դատարանն իրենից պահանջի որոշ ապացույցներ առ այն, որ գաղտնալսում եղել է, իր ներկայացրած ապացույցները բավարար են. հաշվի առնելով վիճարկվող միջոցառումների գաղտնիությունը՝ Կոնվենցիայով տրամադրվող պաշտպանության արդյունավետությունը կխանգարվի, եթե ապացուցման սանդղակը չափազանց բարձր սահմանվի:54. Կառավարությունը բացատրել է, որ չի կարող հրապարակել, թե արդյոք կատարվել է տկն Հալֆորդի անձնական հեռախոսազրույցների գաղտնալսում, քանի որ պահանջվում է, որ Հեռախոսազրույցության գաղտնալսումների հարցերով տրիբունալի եզրակացությունը, որը Տրիբունալն իրավասու է ընդունելու 1985թ. օրենքի հիման վրա, ունենա այնպիսի ձևակերպումներ, որոնք չբացահայտեն, թե արդյո՞ք տեղի է ունեցել 1985թ. օրենքի հիման վրա պատշաճ կերպով թույլատրված՝ հանրային հեռախոսազրույցության համակարգի գաղտնալսում, կամ արդյո՞ք նման փաստացի գաղտնալսում տեղի չի ունեցել: Այնուամենայնիվ, Կառավարությունը կարող է հաստատել, որ, Տրիբունալի կարծիքով, տկն Հալֆորդի գործի կապակցությամբ տեղի չի ունեցել 1985թ. օրենքի 2-րդ և 5-րդ բաժինների խախտում (տե՛ս վերը՝ կետեր 19 և 32):55. Հանձնաժողովը, կիրառելով իր նախադեպային իրավունքը, դիմողից

պահանջել է ապացուցել իր անձնական հեռակապի գաղտնալսման «ողջամիտ հավանականությունը (տե՛ս, օրինակ, Հանձնաժողովի զեկույցի թիվ 12175/86 գանգատի վերաբերյալ, Հյուվիթը և Հարմանն ընդդեմ Միացյալ Թագավորության 1989թ. մայիսի 9-ի վճիռը. Որոշումներ և զեկույցներ 67, էջ 98-99, կետեր 29-32): Ուսումնասիրելով ապացույցները Հանձնաժողովը չի գտել նման հավանականություն հիմնավորող ապացույց:56. Դատարանը հիշեցրել է, որ վերը նշված՝ Կլասսը և այլոք գործով վճռում, *inter alia*, պետք էր պարզել, թե արդյոք օրենսդրությունը, որը պետական մարմիններին լիազորում է հսկողություն իրականացնել այն դիմողների նամակագրական կապի և հեռախոսազրույցների նկատմամբ, ովքեր չեն կարող ապացուցել իրենց հանդեպ նման միջոցների կիրառումը, համարվո՞ւմ է միջամտություն 8-րդ հոդվածով նախատեսված իրավունքներին: Վերոհիշյալ գործով Դատարանը վճռել է, որ նման օրենսդրությունը նախատեսում է հսկողության վտանգ. այս վտանգը անհրաժեշտաբար հարվածում է փոստային և հեռակապի ծառայություններից օգտվողների զգալիությանը և, ուստի, հանդիսանում է պետական մարմինների կողմից միջամտություն դիմողների «անձնական և ընտանեկան կյանքի և նամակագրական կապի հանդեպ հարգանքի իրավունքին» (էջ 21, կետ 41): Դատարանը նաև հիշատակել է Մալոնի գործով վճիռը, որում, ի լրումն նրա, որ Դատարանը գտել է, որ դիմողի մեկ հեռախոսազրույցը գաղտնալսվել է ոստիկանության պահանջով՝ համաձայն Ներքին գործերի նախարարի թույլտվության, Դատարանը նկատել է, որ «Անգլիայում և Ուելսում այն օրենսդրության առկայությունը, որը նախատեսում է կապի գաղտնի հսկողության համակարգ, ինքնին համարվում է «միջամտություն» (էջեր 30-31, կետ 64):57. Այնուամենայնիվ, ի տարբերություն Կլասսը և այլոք գործով դիմողների գանգատի (էջ 20, կետ 30), համաձայն որի 8-րդ հոդվածով նախատեսված՝ դիմողի իրավունքները վտանգվում են գաղտնի հսկողություն թույլատրող ներպետական օրենսդրության առկայությամբ և կիրառմամբ, տկն Հալֆորդի գանգատի էությունը կայանում է նրանում, որ իր նկատմամբ փաստացիորեն կիրառվել են հսկողության նման միջոցներ: Դիմողը նաև պնդել է, որ Մերսիսայդի ոստիկանության կողմից կատարվել է իր հեռագանգերի անօրինական գաղտնալսում՝ 1985 օրենքով չնախատեսված նպատակով (տե՛ս վերը՝ կետեր 26 և 53): Այս պայմաններում, քանի որ դիմողը վիճարկել է իր նկատմամբ հեռախոսային գաղտնալսումների առանձնակի միջոցների անօրինական կիրառումը, Դատարանն ընդունել է դիմողի նկատմամբ նման միջոց կիրառելու ողջամիտ հավանականությունը:58. Այս կապակցությամբ Դատարանը նշել է, որ, նախ և առաջ, համաձայն Կոնվենցիայի համակարգի՝ Հանձնաժողովը, որը փաստերն ստուգող և հաստատող մարմին է (տե՛ս, օրինակ, Աքսոյը ընդդեմ Թուրքիայի գործով 1996թ. դեկտեմբերի 18-ի վճիռը, Վճիռների և որոշումների ժողովածուներ 1996-VI, էջեր 22-72, կետ 38), որ ներկայացված ապացույցները բավարար չեն հաստատելու դիմողի անձնական հեռակապի գաղտնալսման ողջամիտ հավանականությունը (տե՛ս Հանձնաժողովի զեկույցը, կետ 65):59. Դատարանը նշել է, որ տկն Հալֆորդի անձնական և ծառայողական հեռախոսազրույցների գաղտնալսման միակ ապացույցը Մերսիսայդի ոստիկանության կողմից նրա հեռախոսազրույցների ժապավենների ստուգման վերաբերյալ տեղեկությունն է: Դատարանում դիմողը ներկայացրել է ավելի մանրամասն տեղեկություններ այդ բացահայտման վերաբերյալ, այն է՝ որ այդ բացահայտումը կատարվել է իր պաշտոնանկությունից մեկ օր անց (տե՛ս վերը՝ կետ 17): Այնուամենայնիվ, Դատարանն առարկել է այս տեղեկության հավաստիության դեմ, քանի որ դրա աղբյուրը չի նշվել: Բացի դրանից, դիմողին աշխատանքից հեռացնելուց հետո ոստիկանատան կողմից նրա հեռախոսազրույցների ժապավենների ստուգումը հայտնաբերելու փաստը բավարար չէ այն եզրակացության համար, որ դրանք եղել են նրա բնակարանից կատարված հեռախոսազրույցների ձայնագրությունները:60. Ուսումնասիրելով բոլոր ապացույցները՝ Դատարանը չի գտնում, որ տեղի է ունեցել միջամտություն տկն Հալֆորդի անձնական կյանքի և նամակագրական կապի հանդեպ

հարգանքի իրավունքին՝ կապված նրա անձնական հեռագանգերի հետ: Համաձայն վերոհիշյալի՝ Ղատարանը եզրակացրել է, որ տեղի չի ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում՝ կապված տկն Հալֆորդի անձնական հեռագանգերի հետ: II ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 13-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԻՃԱՐԿՎՈՂ ԽԱԽՏՈՒՄ 61. Տկն Հալֆորդը պնդել է նաև, որ ի խախտումն Կոնվենցիայի 13-րդ հոդվածի՝ իր դիմումի համար չի ունեցել իրավական պաշտպանության ներպետական արդյունավետ միջոց: 13-րդ հոդվածը նախատեսում է. «Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»: Ա. Ծառայողական հեռախոսները 62. Դիմողը պնդել է, որ տեղի է ունեցել 13-րդ հոդվածի խախտում, քանի որ ներպետական օրենսդրությունը որևէ իրավական պաշտպանության միջոց չի նախատեսում հասարակական ցանցից առանձին գործող հեռակապի համակարգում գաղտնալսումների դեմ բողոքելու համար: 63. Կառավարությունը վիճարկել է 13-րդ հոդվածի կիրառելիությունը, քանի որ տկն Հալֆորդը Կոնվենցիայի 8-րդ և 10-րդ հոդվածների խախտման վերաբերյալ «պատճառաբանված պահանջ» չի ներկայացրել: Որպես այլընտրանք՝ Կառավարությունը պնդել է, որ այս դրույթի (13-րդ հոդված) հիման վրա որևէ առանձին հարց չի ծագում՝ կապված ծառայողական հեռախոսների հետ: 64. Ղատարանը հիշեցրել է, որ 13-րդ հոդվածը պահանջում է ներպետական մակարդակում պաշտպանության միջոցի ապահովում, որը ներպետական իրավասու մարմիններին թույլ կտա ոչ միայն ըստ էության քննության առնել Կոնվենցիային առնչվող գանգատը, այլ նաև տրամադրել պատշաճ փոխհատուցում, թեև պայմանավորվող պետություններին տրված է որոշակի ազատություն՝ որոշելու այս դրույթով նախատեսված պարտավորությունները կատարելու եղանակը (տե՛ս Չահալն ընդդեմ Միացյալ Թագավորության 1996թ. նոյեմբերի 15-ի վճիռը: Ժողովածուներ 1996-V, էջեր 1869-70, կետ 145): Այնուամենայնիվ, նման պաշտպանության միջոցը պահանջվում է միայն՝ Կոնվենցիայի ձևակերպումներով «վիճելի» համարվող խախտումների դեպքում: 65. Ղատարանը նշել է, որ տկն Հալֆորդը, անկասկած, ունեցել է «վիճելի» գանգատ առ այն, որ իր ծառայողական հեռախոսներից կատարված հեռախոսագրույցները գաղտնալսվել են, և դա հանդիսացել է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում: Հետևաբար, նա ուներ 13-րդ հոդվածով նախատեսված պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք՝ 13-րդ հոդվածի իմաստով: Այնուամենայնիվ, ինչպես Կառավարությունն է նշել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի կապակցությամբ (տե՛ս վերը՝ կետ 50), ներպետական օրենսդրությունը չի նախատեսում պետական մարմինների (ինչպիսին է Մերսիսայդի ոստիկանությունը) կողմից գործարկվող ներքին հեռահաղորդակցության համակարգում հեռակապի գաղտնալսումը կարգավորող դրույթ: Ուստի դիմողը չէր կարող ներպետական մակարդակում ակնկալել իրավական պաշտպանություն՝ կապված ծառայողական հեռախոսներին առնչվող գանգատի հետ: Հետևաբար, տեղի է ունեցել 13-րդ հոդվածի խախտում՝ կապված դիմողի ծառայողական հեռախոսների հետ: Բ. Բնակարանի հեռախոսը 66. Դիմողը նաև բողոքել է՝ ոստիկանության կողմից առանց թույլտվության իր անձնական հեռախոսագրույցների գաղտնալսման դեմ պաշտպանության արդյունավետ միջոց չունենալու կապակցությամբ: Դիմողը հիշատակել է 1985թ. օրենքի հիման վրա նշանակված հանձնակատարի զեկույցը՝ (տե՛ս վերը՝ կետեր 33-34), որում նշված է, որ ինքն առնչություն չունի 1985թ. օրենքով նախատեսված անօրինական գաղտնալսմանը վերաբերող օրինախախտման հետ: Նա չէր կարող, բնականաբար, գիտենալ, կամ պարզել, թե արդյո՞ք տեղի է ունեցել անօրինական գաղտնալսում... Դա ոստիկանության գործն է» (Հեռահաղորդակցության գաղտնալսման մասին 1985թ. օրենք, պառլամենտի անդամի 1986թ. զեկույց, Շմ 108, էջ 2, կետ 3): 67. Կառավարությունը պնդել է, որ տկն Հալֆորդն իր անձնական հեռակապի գաղտնալսման առնչությամբ չի ներկայացրել Կոնվենցիայի խախտման

վերաբերյալ վիճելի գանգատ: Որպես այլընտրանք՝ Կառավարությունը պնդել է, որ նրա տրամադրության տակ եղած պաշտպանության միջոցները, ներառյալ՝ 1985թ. օրենքով նախատեսվածները, բավարարել են 13-րդ հոդվածի պահանջները: 68. Ելնելով դիմողի անձնական հեռակապի գաղտնալսման ողջամիտ հավանականության բացակայությունից՝ Չանձնաժողովը համարել է, որ դիմողը 13-րդ հոդվածով նախատեսված պաշտպանության արդյունավետ միջոցի կապակցությամբ վիճելի գանգատ չի ներկայացրել: 69. Դատարանը հիշեցրել է, որ ընդունելու համար, որ տվյալ Չափորդի անձնական հեռախոսի առնչությամբ տեղի է ունեցել «միջամտություն»՝ 8-րդ հոդվածի իմաստով, անհրաժեշտ է հիմնավորել, որ առկա է դիմողի նկատմամբ հսկողության նման միջոցների ողջամիտ հավանականություն: Դատարանը նաև վկայակոչում է դիմողի՝ իր անձնական հեռակապի գաղտնալսման մասին գանգատը հիմնավորող ապացույցներին տրված իր գնահատականը: 70. Դատարանը գտնում է, որ այս ապացույցը բավարար չէ համարելու համար, որ առկա է «վիճելի գանգատ»՝ 13-րդ հոդվածի իմաստով: Այստեղից հետևում է, որ Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել՝ կապված դիմողի անձնական հեռակապին վերաբերող գանգատի հետ: III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 10-ՐԴ ԵՎ 14-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԻՃԱՐԿՎՈՂ ԽԱԽՏՈՒՄ 71. Տկն Չափորդը բողոքել է, որ իր ել անձնական, ել ծառայողական հեռախոսների գաղտնալսումը հանդիսանում է Կոնվենցիայի 10-րդ և 14-րդ հոդվածների խախտում: Այնուամենայնիվ, Դատարանում նա ընդունել է, որ հարկ չկա 10-րդ և 14-րդ հոդվածների տեսանկյունից քննել այն հարցերը, որոնք քննվել են 8-րդ հոդվածի տեսանկյունից: Կոնվենցիայի 10-րդ հոդվածը սահմանում է. «1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից... 2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով»: 14-րդ հոդվածը սահմանում է. «Սույն Կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելն ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից»: 72. Դատարանը համարել է, որ 10-րդ և 14-րդ հոդվածների կապակցությամբ ներկայացված գանգատները հավասարազոր են 8-րդ հոդվածի կապակցությամբ ներկայացվածներին: Ուստի անհրաժեշտ չի համարում դրանց առանձին քննությունը: IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 50-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄ 73. Տկն Չափորդը Դատարան է դիմել Կոնվենցիայի 50-րդ հոդվածով ամրագրված արդարացի բավարարում ստանալու կապակցությամբ, որում ասվում է. «Եթե Դատարանը գտնում է, որ Բարձր պայմանավորվող կողմի իրավական կամ այլ մարմինների կողմից կայացրած որոշումը կամ կիրառած միջոցը լիովին կամ մասնակիորեն հակասում է Կոնվենցիայով նախատեսված պարտավորություններին, և եթե նշված կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանն, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին տրամադրում է

արդարացի բավարարում»։ Ա. Ոչ նյութական վնասը 74. Տկն Հալֆորդը փոխհատուցում է պահանջել իր անձնական կյանքի նկատմամբ միջամտության և դրա պատճառած անհանգստության դիմաց։ Նա տեղեկացրել է Դատարանին, որ 1992թ. նա բուժվել է սթրեսի դեմ։ 75. Կառավարությունը բացատրել է, որ Աշխատանքային հարցերով դատարանում վարույթի ժամանակ դիմողի նյարդային լարվածության և հեռախոսագրույցների գաղտնալսման միջև որևէ էական կապ չկա։ 76. Դատարանը նկատի ունենալով, որ Մերսիսայդի ոստիկանությունում տկն Հալֆորդի ծառայողական հեռախոսների՝ ներպետական օրենսդրությամբ չկարգավորվող գաղտնալսումը հիմնականում նպատակ է ունեցել նրա դեմ տեղեկություններ հավաքել սեռային խտրականության վարույթում օգտագործելու համար, գտնում է, որ պատասխանը հանդիսանում է համապատասխան անձանց կողմից դիմողի իրավունքների լուրջ խախտում։ Մյուս կողմից, հիմք չկա տկն Հալֆորդի նյարդային լարվածությունը վերագրել նրա հեռախոսագրույցների գաղտնալսմանը, այլ ոչ Մերսիսայդի ոստիկանության հետ ունեցած այլ ընդհարումների։ Հաշվի առնելով այս հանգամանքը, Դատարանը գտնում է, որ 10.000 GBP-ն արդարացի փոխհատուցում է։ Բ. Նյութական վնասը 77. Տկն Հալֆորդը փոխհատուցում է պահանջել Ստրասբուրգի վարույթում իր անձնական ծախսերի դիմաց՝ գնահատված 1.000-1.250 GBP։ 78. Կառավարությունն ընդունել է վարույթում նրա անձնական ծախսերի դիմաց փոխհատուցման տրամադրումը։ Այնուամենայնիվ, նշել է, որ դիմողն իր ծախսերը հիմնավորող ապացույց չի ներկայացրել։ 79. Հաշվի առնելով տկն Հալֆորդի կողմից իր ծախսերը հիմնավորող ապացույց չներկայացնելու, բայց Ստրասբուրգի վարույթի ժամանակ նրա ներկա գտնվելու փաստը, Դատարանը վճռել է այս կետի առնչությամբ նրան տրամադրել 600 GBP։ Գ. Ծախսերը եվ ծախսերը 80. Դիմողը պահանջել է նաև փոխհատուցում՝ կապված սոլիսիտորների և փաստաբանի ծախսերի հետ։ Սոլիսիտորները պահանջել են յուրաքանչյուր ժամի համար 239 GBP։ Նրանք հաշվարկել են, որ Ստրասբուրգի վարույթում իրենց կատարած աշխատանքը կազմել է 500 ժամ և պահանջել են 119.500 GBP-ի չափով (չհաշված ավելացված արժեքի հարկը, ԱԱՀ)։ Նրանք վճարումների և ծախսերի դիմաց պահանջել են 7.500 GBP (հանած ԱԱՀ-ն)։ Փաստաբանի վարձատրությունը կազմել է 14.875 GBP՝ գումարած ծախսերը՝ 1.000 GBP (հանած ԱԱՀ-ն)։ 81. Կառավարությունը համարել է, որ տկն Հալֆորդի սոլիսիտորների պահանջած ժամավճարը չափազանց բարձր է. ներպետական վարույթում համապատասխան ժամավճարը կազմում է 120-150 GBP։ Ավելին, Կառավարությունը պնդել է, որ այս գործում հարկ չկար 500 ժամ աշխատել։ Նրանք նշել են, որ չնայած գործը ներառել է հարցերի նեղ շրջանակ, դիմողի սոլիսիտորը ներկայացրել է մոտավորապես 200 էջ գրավոր միջնորդություն, ինչպես նաև 500 էջ լրացումներ և հավելվածներ, որոնք պարունակել են գործին չվերաբերող կամ մասնակիորեն վերաբերող տեղեկություններ։ Կառավարությունը պնդել է, որ 25.000 GBP-ն լիովին բավարար է իրավաբանական բոլոր ծախսերի դիմաց։ 82. Հաշվի առնելով գործի բնույթը՝ Դատարանը չի համարել, որ դիմողի պահանջած գումարները ծախսվել են անհրաժեշտաբար և ողջամիտ են իրենց չափով (տե՛ս, օրինակ, Սաունդերսն ընդդեմ Միացյալ Թագավորության 1996թ. դեկտեմբերի 17-ի վճիռը, ժողովածուներ 1996-VI, էջ 2070, կետ 93)։ Հավասարության հիմքով Դատարանը վճռել է այս կապակցությամբ տրամադրել 25.000 GBP (ներառյալ ԱԱՀ-ն)։ Դ. Տոկոսներ՝ փոխհատուցումը չվճարելու դեպքում Դատարանի տրամադրության տակ եղած տեղեկության համաձայն՝ սույն վճռի կայացման օրվա դրությամբ Միացյալ Թագավորությունում կիրառվող տարեկան տոկոսադրույթը կազմել է 8%։ ԱՅՍ ՀԻՍՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ 1. Միաձայն վճռում է, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածը կիրառելի է՝ կապված անձնական և ծառայողական հեռախոսներին վերաբերող գանձատների հետ, 2. Միաձայն վճռում է, որ տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում՝ կապված դիմողի ծառայողական հեռակապի հետ, 3. Վճռում է միաձայն, որ դիմողի բնակարանի հեռախոսի առնչությամբ 8-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել, 4.

Միաձայն վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում՝ կապված դիմողի ծառայողական հեռախոսներին վերաբերող գանգատի հետ, 5. Վճռում է ութ ձայնով՝ ընդդեմ մեկի, որ Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել՝ կապված դիմողի բնակարանի հեռախոսին վերաբերող գանգատի հետ, 6. Միաձայն վճռում է, որ հարկ չկա գործը քննել ըստ Կոնվենցիայի 10-րդ և 14-րդ հոդվածների, 7. Միաձայն վճռում է, որ՝ ա. պատասխանող պետությունը պարտավոր է եռամսյա ժամկետում փոխհատուցել դիմողի նյութական և ոչ նյութական վնասը՝ 10.600 (տասը հազար վեց հարյուր) ֆունտ ստեռլինգի չափով, բ. պատասխանող պետությունը՝ պարտավոր է եռամսյա ժամկետում փոխհատուցել դիմողի ծախսերի և ծախքերի դիմաց 25.000 (քսանհինգ հազար) ֆունտ ստեռլինգ՝ ներառյալ ԱԱՀ-ն, գ. տարեկան 8% կազմող տոկոսադրույքով տոկոս պետք է վճարվի եռամսյա ժամկետը լրանալուց մինչև վճարումը:

Կատարվել է անգլերենով և ֆրանսերենով, հրապարակվել է դռնբաց նիստում, Սարդու իրավունքների պալատում, Ստրասբուրգում, 1997թ. հունիսի 25-ին:

Ռուդոլֆ Բերնհարդտ, Նախագահ

Չերբերտ Պետցոլդ, Քարտուղար Զամաձայն

Կոնվենցիայի 51-րդ հոդվածի 2-րդ կետի և Դատարանի Կանոնակարգի 52-րդ կանոնի 2-րդ կետի՝ պրն Ռուսոյի չհամընկնող կարծիքը կցվում է վճռին: Ռ. Բ. Չ. Պ. ԴԱՏԱՎՈՐ ՌՈՒՄՈՅԻ ԶՉԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ ես համաձայն չեմ Դատարանի այն եզրակացության հետ, որ Կոնվենցիայի 13-րդ հոդվածը չի խախտվել՝ կապված դիմողի անձնական հեռակապի գաղտնալսմանը վերաբերող գանգատի հետ: Թեև ես համաձայն եմ, որ որևէ միջամտություն տեղի չի ունեցել 8-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքների՝ բնակարանի հեռախոսի առնչությամբ, ես նկատում եմ, որ Զանձնաժողովն ընդունել է նրա գանգատը, և Զանձնաժողովն ու Դատարանը քննել են այն: Ուստի, իմ կարծիքով, չի կարելի ասել, որ նա չի ունեցել 8-րդ հոդվածի խախտման վերաբերյալ «վիճելի» գանգատ՝ կապված բնակարանի հեռախոսի հետ (տե՛ս, օրինակ, Լինդերն ընդդեմ Շվեդիայի 1987թ. մարտի 6-ի վճիռը: Շարքեր Ա, թիվ 116, էջ 30, կետ 79): Այստեղից հետևում է, որ տկն Զալֆորդն ունեցել է իր գանգատի առնչությամբ ներպետական մակարդակում պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք: